

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«30» 01 2019թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, ի դեմս տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Լիթուսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 196 031 800 (մեկ հարյուր իննսունվեց միլիոն երեսունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարիության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ-ին,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 196 031 800 (մեկ հարյուր իննսուներեք միլիոն երեսուներեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:


9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<p>ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա</p> <p>ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24 հ/հ 900011024115</p> <p>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՎՀՀ 00005673</p> <p>ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՄԱՐՇԱԲԱՅԱՆ</p>  	<p>ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ ՊՈԱԿ</p> <p>ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24 հ/հ 900018005422</p> <p>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՎՀՀ 00007498</p> <p>ՏՆՕՐԵՆ՝ Խ. ՄԵԼԻՔՍԵՅԱՆ</p>  
---	---

Հավելված 1
« 30 » 01 2019 թ.
N Կ-7 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ Նախագահ Ռ.Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Խ.Մելիքսեթյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 30 » 01 2019 թ. N Կ-7 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 196 031 800 (մեկ հարյուր իննսունվեց միլիոն երեսունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ՝ ԱԱՀ:


Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ

Կազմակերպություն

ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՏՆՕՐԵՆ՝ Խ.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ


ստորագրություն



ստորագրություն


Հավելված 2
« 30 » 01 2019 թ.
N 6-7 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Լիթուսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթներին պրոցեսների գնահատումը» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Տարածաշրջանի երկրադինամիկ զարգացման պատմության բացահայտում՝ օգտակար հանածոների առաջացման առանձնահատկությունների վերծանում, երկրաբանական վտանգավոր պրոցեսների գնահատում, ջրային ռեսուրսների հետազոտություն և մոնիտորինգ, տեղեկատվական բազայի ստեղծում, արժեքավոր նյութի պահպանում, ցուցադրում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Հայաստանի տարածքի համալիր երկրաբանական հետազոտությունների իրականացումը առաջնահերթ անհրաժեշտություն է ինչպես գիտական, այնպես էլ բազմաթիվ կիրառական հարցեր լուծելու համար: Նախատեսվող հետազոտությունները պետք է ուղեկցվեն դաշտային աշխատանքներով, մասնագիտացված նոր քարտեզների ու կտրվածքների կազմամբ, բրածո ֆաունայի և իզոտոպային հասակային, ապարների, հանքանյութերի, ջրերի և հողերի նյութական կազմի նոր որոշումներով: Նախատեսվում է նաև շարունակել համագործակցությունը հետազոտությունների տարբեր բնագավառներում արտասահմանյան գործընկերների ու կազմակերպությունների հետ: Ստացված արդյունքները կներկայացվեն գիտական հրատարակումների և հաշվետվությունների տեսքով:

Կարևորագույն խնդիրներից են լինելու ակտիվ խզվածքների, վտանգավոր երկրաբանական պրոցեսների. լանջային (սողանքների, փլուզումների), հողերի ջրիկացման և այլ վտանգավոր երկրաբանական երևույթների և փոխհարուցման, փոխկապակցությունների բացահայտում:

Կշարունակվեն ՀՀ ռելիեֆի ձևերի և գեոմորֆոտերիական ցուցանիշների ուսումնասիրման ուղղությամբ հետազոտությունները՝ տարբեր աղբյուրներից ստացված ռելիեֆի թվային մոդելների (SRTM, ASTER, ALOS) և 1:25000 մասշտաբի տեղագրական քարտեզների համադրությամբ: Կմշակվեն ջրհեղեղների և սելավների վտանգի բազմագործոն գնահատման մոդելներ:

Կգնահատվեն Սևանի ավազանի ջրային ռեսուրսների քանակակի և որակի փոփոխության տենդենցները և խոցելիությունը կլիմայի փոփոխությունից: Կբացահայտվեն Սևանի ավազանում տնտեսական գործունեությամբ պայմանավորված ճնշումները էկոհամակարգերի վրա, կգնահատվեն դրանց քանակական և որակական ազդեցությունը մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա:

ՀՀ և Արցախի Հանրապետության տարածքների տարատեսակ (մագմատիկ, մետամորֆային ու հրաբխանստվածքային, նստվածքային) և տարահասակ ապարների ուսումնասիրություն՝ դաշտային և լաբորատոր պայմաններում:

Հրաբխատեկտոնական, սեյսմիկ հետազոտական աշխատանքներ Հայաստանի երիտասարդ հրաբխային կլաստերների սահմաններում՝ տարբեր հրաբխային կլաստերների էֆուզիվ հրաբխականության կրկնման հաճախականության հաշվարկի աշխատանքներ:

ՀՀ տարածքում հրաբխային մոխրի նույնականացման, պիրոկլաստիկ ժայթքման նյութի երկրաքիմիական, միներալոգիական և երկրաժամանակագրական ուսումնասիրություններ՝ ստացված տվյալների բազայի ստեղծմամբ:

ՀՀ մեզոկայնոզոյան կղզադեղային հնահրաբխածնական (և ներծին), երկրադինամիկ, մետադազոյացման գոտիների, հանքային շրջանների, պոտենցիալ հանքային դաշտերի, հանքավայրերի առաջացման և տեղաբաշխման օրինաչափությունների շարունակական ուսումնասիրություն:

Ուսումնասիրությունների նպատակը ծագումնաբանական առանձնահատկությունների՝ հասակի, մասշտաբայնության, հանքային մարմինների, հանքուղեկից փոփոխությունների, հանքային բակտերիաների և ֆլյուիդ ներփակումների գնահատումն է նորովի վերլուծությամբ:

Կիրականացվեն Հայաստանում և Արցախի Հանրապետությունում հոլոցենի լյուսպալեոբնահող, ՀՀ միոցեն-պլիոցեն հասակի պալեոլճային նստվածքների համալիր ուսումնասիրություններ:

Հարավ Հայկական միկրոցամաքի պալեոգենի նստվածքային մերկացումների միներալապետրոգրաֆիական, հնէաբանական, կառուցվածքային ուսումնասիրություններ: Նպատակը (նպատակները) և խնդիրները՝ պալեոմիջավայրի, պալեոկլիմայի վերականգնում, նստվածքային ավազանի երկրադինամիկայի և ածխաջրածինների կուտակման հնարավոր բարենպաստ կառույցների անջատում:

Ցաներոզոյան էոնի տարբեր օրգանական խմբերի էվոլյուցիոն զարգացման օրինաչափությունների երկրաբանական անցյալում կենսաբանական մահացումների բացահայտում, հնաէկոլոգիական պայմանների բացահայտում, ինչպես նաև օրգանական մնացորդների անհետացման պատճառների, պալեոկլիմայի, նստվածքակուտակման առանձնահատկությունների վերհանումը:

Կշարունակվեն ՀՀ տարածքի տարբեր գենետիկ խմբերին պատկանող ջրերի կազմերի և որակի հետազոտությունները:

Աշխատանքները իրենց մեջ պարունակում են նաև կիրառական հետազոտություններ, որոնք կարևոր են ՀՀ տնտեսական զարգացման ծրագրերի (քաղաքաշինական, տրանսպորտային, էներգետիկ, գյուղատնտեսություն և այլն) իրականացման համար:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Հնէաբանության և շերտագրության լաբորատորիա

Հայաստանի միջին և վերին դևոնի, ստորին կարբոնի և պերմի հարկերի շերտախմբերի հասակագրումը կոնոդոտներով, բրախիոպոդներով և այլ միկրոֆաունաներով:

Նշված ֆաունայի ուսումնասիրությունը կարևոր է հնակլիմայական, հնաէկոլոգիական, օվկիանոսների խորության պայմանների, կենսաբանական ճգնաժամերի՝ պերմ-տրիասի, դևոնի և կարբոնի սահմանային նստվածքների, ինչպես նաև նստվածքային ծագման օգտակար հանածոների, այդ թվում՝ նավթի և գազի որոնման և հետախուզման գործում:

Կիրականացվեն չորրորդական ժամանակաշրջանի մանր տերիոֆաունայի ուսումնասիրություններ:

Լիթոլոգիայի և ռեգիոնալ երկրաբանության լաբորատորիա

ա) ՀՀ պլիոցեն-չորրորդական պալեոլճերի նստվածքների ուսումնասիրություններ, դրանց ծագումնաբանությունը (ներառյալ հրաբխային), նստվածքագոյացման կառուցվածքային

առանձնահատկությունները, դեֆորմացիաները (այդ թվում՝ սեյսմածին), առկա բրածո ողնաշարավորները, դիատոմները, ծաղկափոշին, համադրված լիթոշերտագրական ուսումնասիրություններով թույլ կտան մանրամասն մեկնաբանել անցյալի գործընթացները՝ շրջակա միջավայրի պայմաններով և կլիմայական փոփոխություններով:

Կիրականացվեն ՀՀ և ԱՀ տարածքներում չորրորդական ժամանակահատվածի լյուս-պալեոբնահող նստվածքների, որպես շրջակա միջավայրի և կլիմայական պայմանների բացահայտման բացառիկ պահոցների, համալիր ուսումնասիրություններ:

բ) Պալեոգենի նստվածքային ավազանի երկրաբանակառուցվածքային, լիթոհնէաբանական և տեկտոնական առանձնահատկությունների՝ ուսումնասիրությունները կօգնեն ավելի լավ պատկերացնել այս ժամանակահատվածում կլիմայական կտրուկ փոփոխությունները, տարածքի երկրադինամիկ առանձնահատկությունները: Ստացված արդյունքները կնպաստեն ուսումնասիրվող տեղամասերում՝ ածխաջրածինների կուտակման հնարավոր ստրուկտուրաների անջատման համար:

Պետրոլոգիայի և իզոտոպային երկրաբանության լաբորատորիա

Տարբեր հասակի մագմատիկ համալիրների և օֆիոլիթային ասոցիացիայի ապարների հետազոտություններ՝ Փոքր Կովկասի և հատկապես Ալպ-Հիմալայան լեռնաձալքավոր գոտու երկրաբանական-երկրադինամիկ էվոլյուցիայի պատմության ուսումնասիրությունների արդիականության համատեքստում:

Դաշտային աշխատանքները կարևորվելու են տարբեր կազմի ու ծագման ապարների ֆացիալ կազմերի, դրանց փոփոխությունների ու տարբեր ֆացիաների միջև փոխհարաբերությունների բնույթի հետազոտություններով:

Հրաբխագիտության լաբորատորիա

2019 թվականին կշարունակվեն GIS համակարգով հրաբխագիտական և տեկտոնական տվյալների հավաքագրումը և ICP-MS, XRF մեթոդներով անալիտիկ տվյալների իրականացումը և դրանց վերլուծությունը: Նախատեսվում է շարունակել ՀՀ տարածքում հրաբխային մոխրի պիրոկլաստիկ ժայթքման նյութի երկրաքիմիական, միներալոգիական և երկրաժամանակագրական ուսումնասիրությունները: Կիրականացվեն Հայաստանի տարբեր հրաբխային կլաստերների էֆուզիվ հրաբխականության կրկնման հաճախականության հաշվարկի աշխատանքներ՝ ընդհանրացված նոր և գրականությունում առկա երկրաժամանակագրական տվյալների հիման վրա:

Հայկական բարձրավանդակի էքսպլոզիվ հրաբխականության երկրաժամանակագրական տվյալների ընդհանրացման հիման վրա պլանավորվում է գնահատել շրջանի էքսպլոզիվ ժայթքումների կրկնման հաճախականությունը:

Օգտակար հանածոների լաբորատորիա

ՀՀ տարածքի հայտնի հանքային դաշտերի սահմաններում թաքնված հանքայնացումների հայտնաբերման և գնահատման աշխատանքներ: Երկրաքիմիական, կառուցվածքային-երկրաբանական ուսումնասիրություններ հանքային դաշտերի սահմաններում ոսկի-սուլֆիդային, պղինձ-մոլիբդենային և բազմամետաղային հանքայնացումների էլեմենտ-ինդիկատորների որոշման, ֆորմացիոն պատկանելիության ճշգրտման, հողմնահարման մակարդակի, հանքաբերության գնահատման, հանքվերահսկող կառույցների վերհանման նպատակով:

ՀՀ մեգոկայնոզոյան կղզադեղային հնահրաբխածնական երկրադինամիկ, մետաղագոյացման գոտիների, հանքային շրջանների, հանքային դաշտերի, հանքավայրերի առաջացման և տեղաբաշխման օրինաչափությունների ուսումնասիրություններ:

Ուսումնասիրություններ ծագումնաբանական առանձնահատկությունների՝ հասակի, մասշտաբայնության, հանքային մարմինների, հանքուղեկից փոփոխությունների, հանքային բակտերիաների և ֆլյուիդ ներփակումների գնահատման նորովի վերլուծություն:

Հիդրոերկրաքիմիայի լաբորատորիա

Նախատեսվում է Հանրապետության տարածքի հանքային, խմելու քաղցրահամ, հանքավայրային ջրերի կազմի մասին մշտադիտարկումային (մոնիթորինգային) տվյալների հավաքագրումը: Անալիտիկ հետազոտությունների նոր տվյալները կհամալրեն հիդրոքիմիական տվյալների ստեղծվող հենքը, ինչը հիմք է ծառայելու ջրերի կազմերի սպասվող փոփոխությունների կանխատեսման, բացասական ազդեցությունների դեմ միջոցառումների մշակման և ընդհանրապես՝ ՀՀ տարածքի ջրերի (հատկապես խմելու քաղցրահամ ջրերի) որակի կառավարման խնդիրների լուծման համար: Նշված և այլ խնդիրների լուծումներն ապահովելու համար առաջնահերթությունը տրվելու է հետևյալ խնդիրներին, հետազոտման օբյեկտներին և մեթոդներին.

- խմելու քաղցրահամ ջրերի կազմի ձևավորման առանձնահատկություններ,
- խմելու քաղցրահամ ջրերի որակ,
- մակերևութային հոսքի ջրեր,
- հանքավայրային ջրեր,
- հանքային ջրեր,

Երկրադինամիկայի և երկրաբանական վտանգների լաբորատորիա

Վտանգավոր երկրաբանական երևույթներից՝ երկրաշարժերի հետ կապված հետազոտություններն ունեն տեսական և կարևոր կիրառական նշանակություն: Հիմնական ուսումնասիրությունների նպատակները վերաբերում են Հայաստանի Հանրապետության և շրջակա տարածքի երկրադինամիկ զարգացումներին և վտանգավոր երկրաբանական երևույթներին: Բավական է թվարկել Սպիտակի աղետի հետևանքները, հասկանալու համար լաբորատորիայի կողմից իրականացվող աշխատանքների կարևորությունը: Համագործակցությամբ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի այլ լաբորատորիաների և արտերկրյա հաստատությունների հետ, հետազոտությունների ժամանակ ցուցաբերվում են համալիր, բազմաբաղադրիչ և ժամանակակից մոտեցումներ: Երկրադինամիկային վերաբերող ուսումնասիրությունները ներառում են նաև տեկտոնական, կառուցվածքային երկրաբանական հետազոտություններ՝ նաև հրաբխագիտական (համաբորձակցությամբ ԵԳԻ՝ հրաբխագետների հետ), պետրոգրաֆիական (համագործակցությամբ նստվածքաբանների, պետրոլոգների հետ) բաղադրիչներով:

Գեոարխեոլոգիայի և գեոմոնիթորինգի լաբորատորիա

Ուսումնասիրությունները ներառում են ՀՀ տարածքում երկրաֆիզիկական մեթոդների օգտագործումը երկրահնագիտական խնդիրների լուծման համար՝ ինչպես նաև արխեոսեյամալոգիայի, սեյսմատեկտոնիկայի առանձին խնդիրներ: «Տրանսեկտ» միջազգային նախագծի շրջանակներում տեղադրված կայաններից ստացված ինֆորմացիայի հավաքագրում և արխիվացում: Երկրաշարժերի ֆոկալ մեխանիզմների հաշվարկ համապատասխան պարամետրերի կատալոգի ստեղծմամբ:

Երկրաբանական տեղեկատվական լաբորատորիա և գրադարան

ա) Նախատեսվում է շարունակել հետազոտությունները ՀՀ ռելիեֆի ձևերի և գեոմորֆոմետրիական ցուցանիշների ուսումնասիրման ուղղությամբ՝ տարբեր աղբյուրներից

ստացված ռելիեֆի թվային մոդելների (SRTM, ASTER, ALOS) և 1:25000 մասշտաբի տեղագրական քարտեզների համադրությամբ:

բ) Օգտագործելով վերը նշված ռելիեֆի և դրա ածանցյալ թվային մոդելների (բարձրություններ, լանջերի թեքություններ և կողմնադրություններ, հոսքի ուղղության և կուտակման մոդելներ) և հիդրոոդերևութաբանական, հողօգտագործման, երկրաբանական տվյալների համադրությունը, կմշակվեն ջրհեղեղների և սելավների վտանգի բազմագործոն գնահատման մոդելներ:

գ) Կգնահատվի Սևանի ավազանի ջրային ռեսուրսների ներկա քանակական և որակական վիճակը, փոփոխության տենդենցները և խոցելիությունը կլիմայի փոփոխությունից: Կբացահայտվեն Սևանի ավազանում մարդածին գործունեությամբ պայմանավորված ճնշումները էկոհամակարգերի վրա, կգնահատվեն դրանց քանակական և որակական ազդեցությունը մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա:


դ) Կկազմվի ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ համապարփակ տվյալների բազա, որի տվյալները կօգտագործվեն կոնկրետ խնդիրների լուծման համար:

ե) Ավարտին կհասցվի ՀՀ ԳԱԱ ԵԳԻ գրադարանի բառարաններում տերմինների որոնման ավտոմատացված համակարգի մշակումը:

զ) Կհամալրվի Երկրի մասին գիտությունների վիրտուալ միջավայրի (vgse, geology.am) բովանդակային և գործառական կազմը:

է) Կշարունակվեն աշխատանքները ՀՀ տարածքում հանքարդյունաբերության արդյունքում ռելիեֆի տեղի ունեցած տեխնածին փոփոխությունների քարտեզի կազմման ուղղությամբ:

Կազմակերպության
սնօրեն՝



(ստորագրություն)

(Խաչատուր Մելիքսեթյան)
(անուն ազգանուն)

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթներին պրոցեսների գնահատումը» ծրագրի

Իրականացվելիք միջոցառման

h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	Գրականության և ֆոնդային նյութերի մշակում	Ուսումնասիրվող նյութերի և օբյեկտների վերաբերյալ արխիվային տվյալների հավաքում	Ուսումնասիրման ենթակա նյութերի և օբյեկտների վերաբերյալ գրադարանային և արխիվային նյութերի հավաքում և մշակում	Նախկինում ստացված տվյալների համեմատություն նորերի հետ, կորեկցիա, համընկնելիության աստիճանի պարզաբանում	05.2019	4 500.0
2.	Դաշտային աշխատանքներ	Դաշտային երկրաբանական աշխատանքներ, դաշտային սարքավորումների տեղադրում, սպասարկում, պահպանություն	Ապարների, հանքանյութերի, ջրերի, հողերի նմուշարկում, երկրաբանական երթուղիներ, կտրվածքների կազմում,	Անհրաժեշտ նյութի հավաքում, եղած տվյալների ճշգրտում, կտրվածքների և մերկացումների գնահատում, դաշտային սարքավորումների տվյալների հավաքագրում	11.2019	34 000.0
3.	Անալիտիկ հետազոտություններ	Հավաքված նյութի նյութական կազմի որոշումներ, լաբ. սարքավորումների սպասարկում,	Հիմնական էլեմենտների կազմի, սպեկտրոմետրիկ, հիդրոքիմիական և այլ հետազոտություններ, շլիֆների պատրաստում	Հետազոտվող նյութերի կազմերի պարզաբանում, համեմատական անալիզ,	12.2019	25 000.0
4.	Ստացված նյութի մշակում	Տվյալների ստուգում, դասակարգում, մուտքագրում համակարգիչ	Համակարգչային աշխատանքներ, տվյալների նախնական խմբավորում և դասակարգում	Տվյալների բազաների, մոդելների կազմման և նախնական ստուգման աշխատանքներ	12.2019	95 531.8
5.	Հոդվածներ,	Ստացված	Ստացված	Զեկուցումներ,	12.2019	37 000.0

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

տարեկան հաշվետվություն	արդյունքների հրատարակում, զեկուցումներ, հաշվետվություն	արդյունքների հրատարակում, զեկուցումներ, հաշվետվություն	հոդվածներ, տարեկան հաշվետվություն		
Ընդամենը					196 031.8

Կազմակերպության
տնօրեն՝



(ստորագրություն)

(Խաչատուր Մելիքսեթյան)
(անուն ազգանուն)


ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթներին պրոցեսների գնահատումը» ծրագրի

հազար դրամ


Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	137 474.6	27 494.9	34 368.7	34 368.6	41 242.4
2	տնտեսական և այլ ծախսեր*	25 885.2	5 177.0	6 471.3	6 471.3	7 765.6
Ընդամենը (առանց ԱԱՀ)		163 359.8	32 672.0	40 840.0	40 840.0	49 007.9
ԱԱՀ		32 672.0	6 534.4	8 168.0	8 168.0	9 801.6
ԸՆԴԱՄԵՆԸ		196 031.8	39 206.4	49 008.0	49 007.9	58 809.5

Կազմակերպության
 տնօրեն՝



 (ստորագրություն)

(Խաչատուր Մելիքսեթյան)
 (անուն ազգանուն)

Կազմակերպության
 գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

(Մարգարիտա Կալուխյան)
 (անուն ազգանուն)




* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

Հավելված 4.1
 « 30 » 01 2019թ.
 N 2-7 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †


Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	13 056.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	4 800.0
	գազի ծառայություն և ջեռուցում	4 800.0
	ջրամատակարարման ծառայություն	516.0
	կապի ծառայություն	1 900.0
	աղբահանություն	200.0
	պահպանություն	840.0
2	Գույք	500.0
3	Սարքեր և սարքավորումներ	2 000.0
4	Նյութեր	3 154.0
5	Գործուղումներ	3 000.0
6	Հրատարակման ծախսեր	100.0
7	Շենքի ընթացիք նորոգում և պահպանում	3 500.0
8	Հիմնական միջոցների ընթացիք նորոգում և պահպանում	500.0
9	Ընդհանուր բնույթի այլ ծախսեր	575.2
Ընդամենը		25 885.2

Կազմակերպության տնօրեն՝


 (ստորագրություն)

(Խաչատուր Մելիքսեթյան)
 (անուն ազգանուն)

Կազմակերպության
 գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

(Մարգարիտտա Կալմուխյան)
 (անուն ազգանուն)



* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լիթուֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. Երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը» ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1	Մելիքսեթյան Խաչատուր	տնօրեն	գ/դ	190 000
2	Զրբաշյան Ռուբեն	տնօրենի խորհրդական	ակադեմիկոս	221 500
3	Բարայան Հեկտոր	տնօրենի խորհրմիջ.կապ/գ	գ/թ	73 000
4	Մկրտչյան Ռուդոլֆ	տնօրենի խորհր.միջ.կապ/գծով		88 000
5	Շահագիզյան Սարգիս	տնօրենի խորհրդատու գեոէկոլոգ.գծով		74 075
6	Սահակյան Լիլիթ	տնօրենի տեղ. գ/գծով	գ/թ	170 000
7	Հովսեփյան Լիլիթ	տնօրենի տեղ.տնտ.և/գ		187 000
8	Շահինյան Հրայր	գիտ.քարտուղար	գ/թ	163 000
9	Միսակյան Մարինե	տնօրենի օգն.միջ.կապ.գծով		100 000
10	Կալմուխյան Մարգարիտա	գլխ.հաշվապահ		177 000
11	Հարությունյան Անահիտ	տնտեսագետ		85 000
12	Ավետիսյան Գոհար	հաշվապահ		90 000
13	Մամաջանյան Կարինե	հաշվապահ-գանձապահ		113 000
14	Գրիգորյան Սուսաննա	տեսուչ կադրերի գծով		95 000
15	Հովհաննիսյան Լիլիթ	գրաս.վարիչ,տնօր.օգն.- քարտուղար.		74 075
16	Հովհաննիսյան Նինա	հատուկ բաժնի տեսուչ		37 020
17	Շահինյան Արաքսյա	օպերատոր-թարգմանիչ		51 000
18	Խոնդկարյան Նարինե	թարգմանիչ- դասավանդող		88 000
19	Դալլաքյան Հասմիկ	գնումների համակարգող		60 000
20	Ավագյան Արա	լաբորատորիայի վարիչ	գ/դ	90 000
21	Խաչիյան Էդուարդ	գլխավոր գիտ.աշխատող	ակադեմիկոս	80 000
22	Աղամալյան Վիլեն	առաջատար գիտ.աշխատող	գ/դ	88 500
23	Առաքելյան Դմիտրի	ավագ գիտ.աշխատող	գ/թ	72 800
24	Մկրտչյան Սուշեղ	գիտ.աշխատող	գ/թ	40 000
25	Լորաբքյան Տիգրան	կրտսեր գիտ.աշխատող	գ/թ	40 000
26	Էզնաթոսյան Նաիրա	կրտսեր գիտ.աշխատող	գ/թ	72 800
27	Մարտիրոսյան Միլեր	կրտսեր գիտ.աշխատող		78 000
28	Աթալյան Թաթուլ	կրտսեր գիտ.աշխատող		78 000
29	Ալավերդյան Գագիկ	առաջ.ճարտարագետ		80 000
30	Ավագյան Սեդա	ճարտարագետ		39 662


* Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը

31	Բաղդասարյան Հայկ	ավագ գիտ.աշխատող	գ/թ	75 500
32	Թոզալարյան Պետրոս	առաջատար գիտ.աշխատող	գ/թ	90 000
33	Սարգսյան Լիլիթ	գիտ.աշխատող,խմբի/դեկ.	գ/թ	80 000
34	Իզիթյան Հայկ	գիտ.աշխատող	գ/թ	80 000
35	Գևորգյան Միքայել	գիտ.աշխատող	գ/թ	80 000
36	Սակարյան Խաչատուր	կրտսեր գիտ.աշխատող	գ/թ	79 325
37	Բալասանյան Սերգեյ	կրտսեր գիտ.աշխատող	գ/թ	80 000
38	Հովհաննիսյան Գոհար	գիտ.աշխատող		74 075
39	Գևորգյան Լիլիթ	գիտ.աշխատող		40 000
40	Առաքելյան Սուրեն	կրտսեր գիտ.աշխատող		75 000
41	Սահակյան Էյա	կրտսեր գիտ.աշխատող		79 325
42	Պողոսյան Անի	կրտսեր գիտ.աշխատող		40 000
43	Դեմիրճյան Հովնաթան	ճարտարագետ- երկրաբան		40 370
44	Աբգարյան Նատալյա	ճարտարագետ		38 000
45	Աբգարյան Ելենա	ճարտարագետ		75 000
46	Լևոնյան Արա	ճարտարագետ-էլեկտրիկ		80 000
47	Թադևոսյան Արամայիս	հսկիչ		40 000
48	Խյդաթյան Քրիստինե	հսկիչ		40 370
49	Նիզոյան Քրիստինե	հսկիչ		40 000
50	Թունյան Սանասար	հսկիչ		37 020
51	Մելիքյան Գայանե	հսկիչ		37 020
52	Ղազարյան Անահիտ	հսկիչ		37 020
53	Մխիթարյան Մխիթար	հսկիչ		40 000
54	Աղայան Սիլվա	հսկիչ		37 020
55	Հովհաննիսյան Արշավիր	լաբորատորիայի վարիչ	գ/թ	90 000
56	Սուրադյան Կարապետ	առաջատար գիտ.աշխատող	գ/դ	90 000
57	Զոհրաբյան Սերգեյ	ավագ գիտ.աշխատող	գ/թ	38 000
58	Հարությունյան Մարիաննա	ավագ գիտ.աշխատող	գ/թ	72 800
59	Միրզոյան Հենրիկ	ավագ գիտ.աշխատող	գ/թ	38 000
60	Հովակիմյան Սամվել	ավագ գիտ.աշխատող	գ/թ	87 000
61	Հարությունյան Լևոն	գիտ.աշխատող	գ/թ	40 370
62	Համբարձումյան Վահագն	կրտսեր գիտ.աշխատող		40 000
63	Միրադեղյան Վարդուհի	ճարտարագետ- երկրաբան		40 370
64	Հայրապետյան Աիդա	ճարտարագետ- երկրաբան		40 000
65	Գալոյան Ղազար	լաբորատորիայի վարիչ	գ/թ	90 000
66	Մելքոնյան Ռաֆայել	գլխավոր գիտ.աշխատող	թղթ.-անդամ	135 000
67	Մաթևոսյան Արշակ	առաջատար գիտ.աշխատող	գ/դ	85 000
68	Ղուկասյան Ռաֆիկ	ավագ գիտ.աշխատող	գ/թ	38 000
69	Խորենյան Ռիմնա	ավագ գիտ.աշխատող	գ/թ	38 000
70	Աթայան Լուսինե	կրտսեր գիտ.աշխատող		78 000
71	Ամիրադյան Սոնա	ճարտարագետ- երկրաբան		78 000
72	Ավոյան Մարինե	ճարտարագետ-քիմիկոս		38 000
73	Գաբրիելյան Նինա	օպերատոր		40 370
74	Գրիգորյան Արայիկ	լաբորատորիայի վարիչ	գ/թ	75 500
75	Հայրապետյան Ֆլորա	ավագ գիտ.աշխատող	գ/թ	72 800
76	Մելիք-Աղամյան Հայկ	ավագ գիտ.աշխատող	գ/թ	72 800
77	Ավագյան Նունե	ճարտարագետ- երկրաբան		79 325
78	Սերոբյան Վահրամ	ճարտարագետ- երկրաբան		79 325

79	Գրիգորյան Գևորգ	ճարտարագետ-երկրաբան		78 000
80	Ավագյան Թոռնիկ	ատաջատար գիտ.աշխատող	գ/դ	105 000
81	Ստեփանյան Ժանետա	ավագ գիտ.աշխատող	գ/թ	38 000
82	Միրիջանյան Ռաֆիկ	ավագ գիտ.աշխատող	գ/թ	38 000
83	Վարդանյան Սարգիս	գիտ.աշխատող	գ/թ	78 000
84	Հովակիմյան Հայկ	կրտսեր գիտ.աշխատող		78 000
85	Հայրապետյան Արեգնազ	կրտսեր գիտ.աշխատող		79 325
86	Գրիգորյան Տարոն	կրտսեր գիտ.աշխատող		78 000
87	Բաղասյան Ինգա	ճարտարագետ		79 325
88	Սարգսյան Հերմինե	ճարտարագետ-երկրաբան		79 325
89	Մուքիասյան Աննա	ճարտարագետ-երկրաբան		79 325
90	Գագուրյան Ռիմնա	ճարտարագետ-քիմիկոս		37 700
91	Ավանեսովա Լյուդմիլյա	ճարտարագետ-քիմիկոս		37 700
92	Սահակյան Քրիստինա	լաբորանտ		41 000
93	Ղուկասյան Յուրա	ավագ գիտ.աշխատող	գ/թ	75 000
94	Ղուլումջյան Հովհաննես	ավագ գիտ.աշխատող	գ/թ	38 000
95	Նավասարդյան Գևորգ	ավագ գիտ.աշխատող	գ/թ	78 000
96	Գևորգյան Հռիփսիմե	կրտսեր գիտ.աշխատող		78 000
97	Մանուչարյան Դավիթ	կրտսեր գիտ.աշխատող		79 325
98	Գրիգորյան Էդմոնդ	կրտսեր գիտ.աշխատող		78 000
99	Բսրայեյան Արսեն	կրտսեր գիտ.աշխատող		79 325
100	Անաստասյան Արմեն	ճարտարագետ-երկրաբան		40 000
101	Տեր-Հակոբյան Վերգինե	հղկող		74 075
102	Մկրտչյան Ավետիս	հղկող		38 000
103	Զաքարյան Շուշանիկ	ավագ գիտ.աշխատող	գ/թ	98 500
104	Գյուլնազարյան Շուշան	ավագ գիտ.աշխատող	գ/թ	94 000
105	Սաֆարյան Ռուզաննա	ճարտարագետ-երկրաբան		79 325
106	Սահակով Արկադի	լաբորատորիայի վարիչ	գ/թ	83 500
107	Մկրտչյան Ստելլա	կրտսեր գիտ.աշխատող	գ/թ	78 000
108	Նազարյան Անուշ	ճարտարագետ-քիմիկոս		74 075
109	Ապերյան Արաքսյա	ճարտարագետ-քիմիկոս		74 075
110	Գրիգորյան Օֆելյա	ճարտարագետ-քիմիկոս		74 075
111	Ավետիսյան Անահիտ	ճարտարագետ-քիմիկոս		74 075
112	Հովհաննիսյան Ասյա	ճարտարագետ-սպեկտր.		37 700
113	Թումանյան Արմինե	ճարտարագետ-սպեկտր.		36 400
114	Առաքելյան Ալեքսանդր	լաբորատորիայի վարիչ	գ/թ	80 500
115	Ավագյան Արշավիր	ատաջատար գիտ.աշխատող	գ/թ	80 500
116	Նալբանդյան Մարինե	ավագ գիտ.աշխատող	գ/թ	38 000
117	Երիցյան Հայկ	գիտ.աշխատող		74 075
118	Տարասյան Նարեկ	ճարտարագետ		79 325
119	Մարգարյան Լիլիթ	ճարտարագետ		79 325
120	Ուլոյան Հարություն	ճարտարագետ		79 325
121	Ներսիսյան Արաքսյա	ճարտարագետ		79 325
122	Գասպարյան Միրանուշ	գրադարանի վարիչ		90 000
123	Ներսիսյան Անժելիկա	գրադարանավար		79 325
124	Ստեփանյան Կարինե	ճարտարագետ		37 700
125	Գրիգորյան Գայանե	թանգարանի վարիչ		90 000
126	Պողոսյան Նարինե	ճարտարագետ-երկրաբան		74 075
127	Սահակյան Նարեկ	ճարտարագետ		40 000


128	Դավթյան Ռուբեն	ճարտարագետ		40 370
129	Ավագյան Սեդա	ճարտարագետ		39 662
130	Նաիրա Վարդանյան	ճարտարագետ		38 000
131	Աննա Հարությունյան	ճարտարագետ		80 000
132	Պետրոսյան Ստելլա	տեխնիկ		74 075
133	Միսկարյան Գագիկ	պարենտ-պահեստապետ		95 000
134	Պողոսյան Սուրեն	տնտեսավար		93 000
135	Սարգսյան Գագիկ	վարորդ		74 075
136	Գասպարյան Սարտին	էլեկտրիկ, բանվոր		74 075
137	Երիցյան Մարատ	վարորդ		74 075
138	Փայանջյան Հայրապետ	վարորդ		74 075
139	Լալայան Հարություն	հերթափոխային պահակ		86 710
140	Ղումաշյան Սաշա	հերթափոխային պահակ		86 710
141	Մարտիրոսյան Նարինե	հերթափոխային պահակ		86 710
142	Բեդրոսյանց Վլադիմիր	հերթափոխային պահակ		86 710
143	Կարապետյան Անահիտ	հերթափոխային պահակ		92 850
144	Արզումանյան Էսֆիրա	հսկիչ		38 000
145	Դալյաքյան Արման	հսկիչ		37 700
146	Վերանյան Ռուզաննա	հսկիչ		40 370
147	Ասոյան Նարինե	հսկիչ		46 300
148	Վարդանյան Լենդրուշ	հսկիչ		37 700
149	Զանոյան Սվետլանա	հավաքարար		60 000
150	Զայանա Սվետլանա	հավաքարար		46 300
151	Հովհաննիսյան Ասյա	հավաքարար		46 300
152	Հայրապետյան Ալվարդ	հավաքարար		46 300
Ընդամենը				10 872 829

Կազմակերպության
տնօրեն՝



(ստորագրություն)

(Խաչատուր Մելիքսեթյան)
(անուն ազգանուն)

Կազմակերպության
կադրերի տեսուչ՝


(ստորագրություն)

(Սուսաննա Գրիգորյան)
(անուն ազգանուն)



Կ.Տ.